

ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ N 1

Իրավունքների, պարտավորությունների փոխանցման և պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ 2018 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված N ARB/18/28-2 պետության կարիքների համար փաստաբանական և իրավաբանական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ն. Ղազարյանի (այսուհետ՝ Կողմ 1),

“Baker & McKenzie LLP” ընկերությունն, ի դեմս ընկերության գործընկեր Գրանտ Հանեսյանի (այսուհետ՝ Կողմ 2), և

Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի ղեկավար Է. Աղաջանյանի (այսուհետ՝ Կողմ 3),

երեքը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով 2018 թվականի դեկտեմբերի 18-ին կնքված N ARB/18/28-2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.4 կետը, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 1736-Ա որոշումը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1. Սույն Համաձայնագրով Կողմ 1-ը Կողմ 3-ին պարտավորվում է անհատույց փոխանցել Պայմանագրով սահմանված իր բոլոր իրավունքները և պարտավորությունները:

AGREEMENT N 1

On transfer of rights, obligations and amending the contract

To the state procurement contract on providing legal advice services for state needs № ARB/18/28-2 executed on December 18, 2018

The Ministry of Justice of the Republic of Armenia, represented by N. Ghazaryan, Acting Chief of Secretary (the “Party 1”);

“Baker & McKenzie” LLP, represented by Grant Hanessian, Partner (the “Party 2”);

Office of the Prime Minister of the Republic of Armenia, represented by E. Aghajanyan, Chief of Staff (the “Party 3”);

collectively referred to as the “Parties”, based on the clause 7.4 of the state procurement contract on providing legal advice services for state needs № ARB/19/1, concluded on December 18, 2018 (the “Contract”), as well as based on the decree N 1736-U as of December 5, 2019 of the Government of the Republic of Armenia, entered into this agreement (the “Agreement”) on the following:

1. Scope of the Agreement

1.1. Under this Agreement, Party 1 shall transfer all its rights and obligations to Party 3 under the Contract.

1.2. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից Կողմ 1-ի և 2-ի միմյանց հանդեպ Պայմանագրի հիման վրա ծագած որևէ իրավունք և պարտավորություն դադարում է:

1.3. Սույն կետով սահմանված պահանջի իրավունքի զիջման արդյունքում Կողմ 2-ը պարտավորվում է մատուցել Պայմանագրով սահմանված ծառայությունները Կողմ 3-ին Պայմանագրով սահմանված ծավալով և այլ պայմաններով:

1.4. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշում են՝

1.4.1. փոփոխել Պայմանագրի 4.1. կետը և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 750.000 (յոթ հարյուր հիսուն հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից.

ա) Պայմանագրի հավելված N 1-ում սահմանված 1-ին փուլը կազմում է 200,000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ,

բ) Պայմանագրի հավելված N 1-ում սահմանված 2-րդ փուլը կազմում է 550,000 (հինգ հարյուր հիսուն հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:»

1.4.2. Պայմանագրի 4.1.1 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.1.1 Սույն պայմանագրի 4.1. կետում սահմանված գնի սահմաններում Կողմերն ընդունում են Կատարողի՝ ծառայությունների

1.2. From the effective date of this Agreement any rights and obligations of Party 1 and Party 2 based on the Agreement will be terminated.

1.3. Resulting from the assignment of the right to claim, as prescribed in this clause, Party 2 shall render the services set forth by the Contract to Party 3 in compliance with the scope and other conditions set forth by the Contract.

1.4. The Parties mutually agree:

1.4.1. to amend clause 4.1. of the Contract, which shall read as follows:

“4.1. The total Service fee under the Contract shall comprise AMD equivalent to USD 750.000 (seven hundred fifty thousand), from which:

a) the first stage set forth by Annex N 1 of the Contract shall comprise AMD equivalent to USD 200,000 (two hundred thousand);

b) the second stage set forth by Annex N 1 of the Contract shall comprise AMD equivalent to USD 550,000 (five hundred fifty thousand).”

1.4.2. to amend clause 4.1.1 of the Contract, which shall read as follows:

“4.1.1 Subject to clause 4.1 above, the Parties acknowledge the following hourly rates for provision of the Services by the Executor:

մատուցման հետևյալ ժամային դրույքաչափերը.

I. Կատարողի կողմից մատուցված ծառայության համար հետևյալ ժամադրույքներով.

- գործընկերներ՝ 1055 ԱՄՆ դոլար,
- փաստաբաններ՝ 475 ԱՄՆ դոլար,
- իրավաբաններ՝ 468 ԱՄՆ դոլար,
- իրավաբանի օգնականներ՝ 300 – 310 ԱՄՆ դոլար,

II. Տեղական խորհրդատուի կողմից մատուցված ծառայության համար հետևյալ ժամադրույքներով.

- գործընկերներ՝ 450 – 550 ԱՄՆ դոլար,
- փաստաբաններ՝ 350 ԱՄՆ դոլար,
- իրավաբանի օգնականներ՝ 150 ԱՄՆ դոլար:»

1.4.3. Պայմանագրի 4.2. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.2. Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Կողմերի կողմից հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման և Կատարողի կողմից հաշվարկային փաստաթղթի ներկայացման օրվանից 30 (երեսուն) բանկային օրվա ընթացքում: Հանձնման-ընդունման արձանագրությունը համարվում է ամբողջական, եթե դրանում նշվել է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մատուցված ծառայության տեսակը (նկարագրությունը) և ծառայության արժեքը:»

I. for Services rendered by the Executor, based on the following hourly rates:

- Partners: USD 1055;
- Counsels: USD 475;
- Associates: USD 468;
- Paralegals: USD 300 – 310;

II. for Services rendered by local counsel, based on the following hourly rates:

- Partners: USD 450 – 550;
- Counsels: USD 350;
- Paralegals: USD 150.”

1.4.3. to amend clause 4.2. of the Contract, which shall read as follows:

“4.2. The Client shall pay for the services rendered thereto in AMD through bank transfer to the account of the Executor. Transfer of the monetary funds shall be processed within 30 (thirty) banking days after execution of the Delivery and Acceptance Protocol signed by the Parties and submitting a billing document by the Executor. The Delivery and Acceptance Protocol shall be deemed complete if the following data is indicated therein: the type (description) of the services and price of the services.”

Annex N 2.

1.5. The Parties acknowledge and agree that the handover of the services rendered by Party 2

1.4.4. Պայմանագրի 4.3. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.3. Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, բացառությամբ փորձագետի վարձատրության, Կատարողի և տեղական խորհրդատուի ներկայացուցիչների, Արբիտրաժային գործով ներգրավված վկաների գործուղման հետ կապված ծախսերը, ինչպես նաև Արբիտրաժային գործի առնչությամբ ի հայտ եկած այլ ծախսերը, որոնք ենթակա են հատուցման Պատվիրատուի կողմից՝ պայմանով, որ այդ ծախսերը նախապես գրավոր (էլեկտրոնային եղանակով) հաստատվել են Պատվիրատուի իրավասու մարմնի կողմից և ամրագրվել են Կողմերի կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրություններում: Գինը չի ներառում ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները: Գինը կայուն է և ենթակա չէ փոփոխման:»

1.4.5. փոփոխել Պայմանագրի հավելված N 1-ը, որը հաստատվում է նոր խմբագրությամբ և կցվում է սույն Համաձայնագրին որպես հավելված N 1:

1.4.6. փոփոխել Պայմանագրի հավելված N 2-ը, որը հաստատվում է նոր խմբագրությամբ և կցվում է սույն Համաձայնագրին որպես հավելված N 2:

1.5. Կողմերը ընդունում և համաձայնում են Կողմ 2-ի կողմից մինչև սույն

1.4.4. to amend clause 4.3. of the Contract, which shall read as follows:

“4.3. The price includes all the expenses incurred by the Executor, except for the remuneration of the expert, business travel expenses of the witnesses, the representatives of the Executor and local counsel, as well as other expenses related to the Arbitration Case, which are subject to reimbursement by the Client, provided that such expenses have been approved in advance in writing (via email) by the respective authority of the Client and have been stated in the Delivery and Acceptance Protocol, signed by the Parties. The Price excludes all the taxes, duties and other compulsory payments imposed by the legislation of the Republic of Armenia. The Service fee is stable and is not subject to any change.”

1.4.5. to amend Annex N 1 of the Contract, which shall be read in new edition and is attached to this Agreement as Annex N 1.

1.4.6. to amend Annex N 2 of the Contract, which shall be read in new edition and is attached to this Agreement as Annex N 2.

1.5. The Parties acknowledge and agree that the handover of the services rendered by Party 2

Համաձայնագրի կնքման օրը մատուցված, սակայն Կողմ 1-ի կողմից չընդունված ծառայությունների հանձնում-ընդունումը կատարվելու է Կողմ 2-ի և Կողմ 3-ի միջև ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա, իսկ Պայմանագրից բխող ծառայության գնի վճարումը կատարվելու է Պայմանագրի Հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցի հիման վրա:

2. Ամբողջականություն

2.1. Սույն Համաձայնագրի դրույթները բաժանելի են: Եթե որևէ դրույթ կամ պայման ճանաչվում են ամբողջությամբ կամ մի մասով անվավեր կամ իրավական ուժ չունեցող որևէ իրավասության ներքո, ապա այդպիսի անվավերությունը կամ իրավական ուժի բացակայությունը ազդում է միայն նշված դրույթի կամ պայմանի վրա, կամ նշված դրույթի կամ պայմանի մասի վրա համապատասխան իրավասության ներքո և որևէ կերպ չի ազդում սույն Համաձայնագրի այլ դրույթների կամ պայմանների վրա որևէ այլ իրավասության ներքո:

3. Այլ դրույթներ

3.1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրող Կողմերից վերջինի կողմից ստորագրման օրվանից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ և ամբողջությամբ կատարելը: Սույն Համաձայնագրի դրույթները տարածվում են 2019 թվականի օգոստոսի 4-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

3.2. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ և ուժի մեջ:

before execution of this Agreement, which haven't been accepted by the Party 1, shall be carried out on the basis of the delivery-acceptance protocols, signed by Party 2 and Party 3, and the payment of the service fee shall be processed in compliance with the payment schedule set forth by Annex 2 of the Contract.

2. Severability

2.1. The Provisions of this Agreement are severable, and if any clause or provision shall be held invalid or unenforceable in whole or in part in any jurisdiction, then such invalidity or unenforceability shall affect only such clause or provision, or part thereof, in such jurisdiction and shall not in any manner affect such clause or provision in any other jurisdiction, on any other clause or provision in this Agreement in any jurisdiction.

3. Miscellaneous

3.1. This Agreement shall take effect from the date of signature of the last signing Party and shall be valid until duly and complete fulfilment of the obligations of the Parties set forth by the Contract. The provisions of this Agreement shall apply to the relationship between the Parties, which arose starting from August 4, 2019.

3.2. The remaining provisions of the Contract shall remain unchanged and in full force.

3.3. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.3. This Agreement shall constitute an integral part of the Contract.

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 14 (տասնչորս) էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի հավելվածներ 1-ը և 2-ը հանդիսանում է Համաձայնագրի և Պայմանագրի անբաժանելի մասը:

3.4. This Agreement is composed of 14 (fourteen) pages, it is concluded in four copies of equal legal effect. Annexes N 1 and N 2 to this Agreement constitute integral part of the Agreement and the Contract.

Կողմ 1-ի անունից՝
Նարեկ Ղազարյան

On behalf of Party 1
Narek Ghazaryan

ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

Acting chief of secretary of the Ministry of Justice of RA

Ստորագրող
Գլխավոր քարտուղար


[Signature]
(ստորագրություն / signature)

Suren Galst'yan
Chief of secretary

21.05.2020

(ստորագրման ամսաթիվ / date of signature)

Կողմ 2-ի անունից՝
Գրանտ Հանեսյան
Գործընկեր

On behalf of Party 2
Grant Hanessian
Partner

[Signature]
(ստորագրություն / signature)

29 April 2020

(ստորագրման ամսաթիվ / date of signature)

Կողմ 3-ի անունից
Էդուարդ Աղաջանյան

On behalf of Party 3
Eduard Aghajanyan

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար

Chief of RA Prime Minister Staff

[Signature]


(ստորագրություն / signature)

(ստորագրման ամսաթիվ / date of signature)

**Հավելված N 1 Համաձայնագրի
Հավելված N 1 Պայմանագրի
(նոր խմբագրությամբ)**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԱՄՆ դոլար

Ծառայության

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	փաստաբանական և իրավաբանական ծառայություններ	չափման միավորը	Ընդհանուր գինը /ԱՄՆ դոլար	Ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79141100	Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի վարությամբ 2018 թվականի օգոստոսի 3-ին մուտքագրված ICSID No. ARB/18/28 արբիտրաժային գործով Հայաստանի Հանրապետության շահերը պաշտպանելու համար փաստաբանական, իրավաբանական ծառայությունների մատուցում ըստ հետևյալ երկու փուլերի		750,000	1	ԱՄՆ, ք. Վաշինգտոն	24.10.2018թ.-ից մինչև արբիտրաժային գործի ավարտը

		<p>Առաջին փուլ – 200,000 ԱՄՆ դոլար</p> <p>Արբիտրաժային տրիբունալի ձևավորման, նախագահի ընտրության, արբիտրաժային գործի նյութերին ծանոթանալու, իրավական և փաստական հետազոտություններ իրականացնելու, ապացույցներ հավաքելու, գործի ռազմավարությունը մշակելու, նախնական ընթացակարգային հանդիպումների մասնակցելու, վկաների և փորձագետների նույնականացման, միջնորդությունների նախապատրաստման և գործի նախապատրաստության հետ կապված այլ անհրաժեշտ գործողությունների կատարում</p>					<p>24.10.2018թ.-ից մինչև արբիտրաժային գործի ավարտը</p>
--	--	---	--	--	--	--	--

		<p align="center">Երկրորդ փուլ – 550,000 ԱՄՆ դոլար</p> <p>Արբիտրաժային գործի շրջանակներում բոլոր անհրաժեշտ և խելամիտ գործողությունների ձեռնարկումը՝ ապացույցների հավաքումը, փաստաթղթերի նախապատրաստումը, վկաների ցուցումների և փորձագետների եզրակացության վերաբերյալ փաստաթղթերի կազմումը, գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների վերաբերյալ փաստաթղթերի կազմումը, մյուս կողմի առարկություններին և միջնորդություններին ծանոթանալը, դրանց վերաբերյալ պատասխանների ներկայացումը, միջնորդություններ (դիմումներ) ներկայացնելը, արբիտրաժային լուսմներին մասնակցելը և դրանց ընթացքում այլ անհրաժեշտ գործողությունների կատարումը, արբիտրաժային լուսմների ամփոփագրի (անհրաժեշտության դեպքում) պատրաստում և ներկայացում:</p>				<p align="center">Annex N 1 to the Agreement</p> <p align="center">Annex III to the Contract (new edition)</p>	<p align="center">24.10.2018թ. -ից մինչև արբիտրաժային գործի ավարտը</p>
--	--	--	--	--	--	--	--

**Annex N 1
to the Agreement**

*Annex N1 to the Contract
(new edition)*

TECHNICAL SPECIFICATION

USD

Services

lot number provided for by the invitation	Intermediate code provided for by the procurement plan, according to CPV classification	Legal advice services	Measurement unit	Total Price /USD	Total quantity	Delivery	
						address	term
1	79141100	Provision of legal services related to protection of the interests of the Republic of Armenia under Arbitration Case ICSID No. ARB/18/28 submitted to the proceedings of the International Centre for Settlement of Investment Disputes on August 3, 2018. The services shall be rendered in the following two phases		750,000			From October 24, 2018 until the end of the arbitration case
		First stage – USD 200,000 establishing an arbitration tribunal, electing the chairperson of the arbitration tribunal, examining case materials, conducting legal and factual studies, gathering evidence, developing the strategy for the case, participating in preliminary procedural meetings, identifying witnesses and experts, preparing motions and performing other necessary actions related to preparation of the case.			1	USA, Washington	From October 24, 2018 until the end of the arbitration case
		Second stage – USD 550,000 undertaking all the necessary and reasonable actions, required within the arbitration case: gathering evidence, preparing documents, drawing up documents on the testimonies of witnesses and the opinion of the experts, drawing up documents on the factual circumstances of essential significance for the case, getting acquainted with the objections and motions of the other party, responding to these					From October 24, 2018 until the end of the arbitration case

	objections and motions, submitting motions/applications, as well as participation in the arbitration hearing, representation of the Client and performing other actions required in the stage of trial, drafting and submitting post-hearing briefs (if necessary).					
--	---	--	--	--	--	--

Կողմ 1-ի անունից՝
Նարեկ Ղազարյան

ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

On behalf of Party 1
Narek Ghazaryan

Acting chief of secretary of the Ministry of Justice of RA

Մարտիկ Գալստյան
Գլխավոր քարտուղար



(ստորագրություն / signature)

Narek Ghazaryan
Chief of secretary

21.05.2020

(ստորագրման ամսաթիվ / date of signature)

Կողմ 2-ի անունից՝
Գրանտ Հանեսյան
Գործընկեր

On behalf of Party 2
Grant Hanessian
Partner

Grant Hanessian

(ստորագրություն / signature)

29 April 2020

(ստորագրման ամսաթիվ / date of signature)

Կողմ 3-ի անունից
Էդուարդ Աղաջանյան
ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար

On behalf of Party 3
Eduard Aghajanyan
Chief of RA Prime Minister Staff



(ստորագրություն / signature)

(ստորագրման ամսաթիվ / date of signature)


Հավելված N 2 Համաձայնագրի
Հավելված N 2 Պայմանագրի
(նոր խմբագրությամբ)


ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԱՄՆ դոլար

Ծառայության

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Պայմանագրի իրականացումը կատարվելու է հիմնարկում և հիմնարկի կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և վերջինիս հիման վրա Կատարողի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթուղթը					
			դեկտեմբեր 2018թ.	մայիս 2020թ.	հունիս 2020թ.	սեպտեմբեր 2020թ.	դեկտեմբեր 2020թ.	մարտ 2021թ.
1.	79141100	փաստաբանական և իրավաբանական ծառայություններ	100.000	210.000	110.000	110.000	110.000	110.000

Կողմ 1-ի անունից
 Նարեկ Լուգարյան
 ՀՀ արդարադատության նախարարության
 գլխավոր բարձրագույն աստիճանի պաշտոնակատար


On behalf of Party 1
 Narak Ghazaryan
 Acting chief of secretary of the Ministry of Justice
 of RA


21.05.2020
 (ստորագրման ամսաթիվ / date of signature)

PAYMENT SCHEDULE

USD

lot number provided for by the invitation	Intermediate code provided for by the procurement plan, according to CPV classification	Name	Services					USD	
			December 2018	May 2020	June 2020	September 2020	December 2020	March 2021	
1.	79141100	Legal advice services	100.000	210.000	110.000	110.000	110.000	110.000	
			payments shall be carried out in compliance with the following schedule, based on the Delivery and Acceptance Protocol signed by the Parties, set forth by clause 4.2. of the Contract and the billing document (invoice) issued by the Contractor						

Կողմ 1-ի անունից՝

Նարեկ Ղազարյան

ՀՀ արդարադատության նախարարության
գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

[Handwritten signature]
[Handwritten signature]



(ստորագրություն / signature)

29.05.2020

(ստորագրման ամսաթիվ / date of signature)

On behalf of Party 1


Narek Ghazaryan

Acting chief of secretary of the Ministry of Justice
of RA

[Handwritten signature: Sceren Galst'yan]
Chief of secretary

Կողմ 2-ի անունից՝
Գրանտ Հանեսյան
Գործընկեր

On behalf of Party 2
Grant Hanessian
Partner




(ստորագրություն / signature)

29 April 2020

(ստորագրման ամսաթիվ / date of signature)

Կողմ 3-ի անունից
Էդուարդ Աղաջանյան
ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար

On behalf of Party 3
Eduard Aghajanyan
Chief of RA Prime Minister Staff



(ստորագրություն / signature)

(ստորագրման ամսաթիվ / date of signature)

1. Համաձայնագրի առարկան
1.1. Սույն Համաձայնագրով Կողմ 1-ը Կողմ 3-ին փոխանցում է անսահման փոխանցելի Պայմանագրով սահմանված իր իրավունքները և պարտավորությունները:

1. Scope of the Agreement
1.1. Under this Agreement, Party 1 shall transfer all its rights and obligations to Party 3 under the Contract.